

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/7

28 օգոստոսի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Լուսինե Մատինյանի 26.07.2012թ. դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 31.07.2012թ. թիվ 2117517 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 21.07.2012թ. թիվ 2117517 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Լուսինե Մատինյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 25.02.2011թ-ից մինչև 23.07.2012թ. ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքում 31.07.2012թ-ին կազմվել է թիվ 2117517 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Հարություն Ներսեսյանի կողմից 23.07.2012թ. ժամը 12:15-ին ք.Երևան, Բաբաջանյան 1/1 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետից կատարվեց հսկիչ գնում 760 դրամի չափով՝ երկու շիշ գարեջուր, մեկ շիշ կվաս, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 12:21-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց ՀՀ հաշվետվություն՝ 2150 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: ՀՀ հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 760 դրամը, ժամը 12:22-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 12:22-ին նորից դուրս բերվեց ՀՀ հաշվետվությունը՝ 760 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Լուսինե Մատինյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

Սույն թվականի հուլիսի 23-ին Մաշտոցի ՀՏ աշխատակիցների ստուգումների արդյունքում կազմվել է հսկիչ-դրամարկղային մեքենայի ստուգման ակտ պատճառաբանելով, որ վերջին մեկ ու կես ժամվա ընթացքում կտրոն չի տպվել: Սակայն, աշխատողը հերքում է այդ փաստը, քանի որ այդ ընթացքում ընդհանրապես հաճախորդ չի ունեցել:

Ա/Ձ Լուսինե Մատինյանը խնդրում է ընդունել դիմում-բողոքը և անհրաժեշտության դեպքում կատարել ճիշտ ստուգումներ:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Լուսինե Մատինյանի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Բողոքի քննարկման ընթացքում Ա/Ձ Լուսինե Մատինյանի ներկայացուցիչը պնդեց, որ ստուգման ակտով արձանագրվածը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, 23.07.2012թ. ժամը 12:15-ին ք.Երևան, Բաբաջանյան 1/1 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետից հարկային տեսուչ Հարություն Ներսեսյանի կողմից ստուգման ակտում հիշատակված ապրանքների գնում չի կատարվել: Ա/Ձ Լուսինե Մատինյանի

ներկայացուցիչը նշեց նաև, որ խանութում տեղադրված է տեսանկարահանման համակարգ և անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել 23.07.2012թ. տեսագրությունը, որը կհիմնավորի իր պնդումների հիմնավոր լինելը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Լուսինե Մատինյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգող անձանց:

Նշվեց նաև, որ ՀԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ուսումնասիրության հանձնարարագրերում արտացոլման ենթակա տվյալների, ստուգման կամ ուսումնասիրության ընթացքում հարկային ծառայողների կողմից իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որը ՀՀ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 գրությամբ ուղարկվել է ՀՀ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին:

Ընթացակարգի «ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձևը» բաժնում նշված է, որ համապատասխան գործողություններ կատարելուց հետո գնված ապրանքները ստուգման անցկացնող հարկային ծառայողների կողմից պետք է ետ վերադարձվեն տնտեսավարողին, ետ ստանան հսկիչ գնման գումարը, դրից հետո տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ընթացակարգով սահմանված վերոգրյալ գործողությունները ստուգման իրականացնող հարկային ծառայողների կողմից չեն կատարվել: Մասնավորապես, գնված ապրանքները ետ չեն վերադարձվել տնտեսավարողին, ետ չի ստացվել հսկիչ գնման գումարը, չի տպվել վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտով արձանագրված խախտումը, ըստ էության, չի կարող անպացուցված համարվել: Այսինքն, խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. >:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՊԵԿ Սյաշտոցի ՀՏ 31.07.2012թ. թիվ 2117517 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ